

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

----- 2018 թվականի N-----Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ**

**ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 1732-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ**

**ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի «Անշարժ գույք հետ վերցնելու, անհատույց օգտագործման իրավունքով հանձնելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի նոյեմբերի 27-ի N 1551-Ա, 2004 թվականի հոկտեմբերի 21-ի N 1451-Ա և 2012 թվականի մայիսի 17-ի N 614-Ա որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1732 - Ա որոշման 8-րդ կետում «մեկամսյա» բառը փոխարինել «եռամսյա» բառով:

## **Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ**

**«Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի N 1732 - Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»**

**Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ**

### **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը).**

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի N 1732 - Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունումը բխում է ուսումնական մասնաշենքի հիմնանորոգման-ուժեղացման աշխատանքների դրական փորձաքննությամբ նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ժամկետն երկարաձգելու անհրաժեշտությունից:

### **Ընթացիկ իրավիճակը և խնդիրները.**

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի N 1732 - Ա որոշման 8-րդ կետի Երևան քաղաքի Մյասնիկյան պողոտա 2 հասցեում գտնվող անշարժ գույքի (նախկին «Երևանի Ա. Գրիբոյեդովի անվան N 41 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի շենք) հիմնանորոգման-ուժեղացման նպատակով ՀՀ պետական բյուջեից գումար հատկացնելու վերաբերյալ ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից առաջարկություն ներկայացնելու ժամկետը սահմանված է 15.02.2018թ., սակայն դրա հետ կապված հիմնանորոգման-ուժեղացման աշխատանքների դրական փորձաքննությամբ նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ավարտը նախատեսված է 10.04.2018թ.:

### **Կարգավորման նպատակը և բնույթը.**

Ժամկետի երկարաձգումը հնարավորության կտա սահմանված ժամկետում և պատշաճ իրականացնելու Երևան քաղաքի Մյասնիկյան պողոտա 2 հասցեում գտնվող անշարժ գույքի (նախկին «Երևանի Ա. Գրիբոյեդովի անվան N 41 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի շենք) հիմնանորոգման-ուժեղացման աշխատանքների դրական

փորձաքննությամբ նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները:

**Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.**

ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակիցները:

**Իրավական ակտի կիրարկման դեպքում ակնկալվող արդյունքը.**

Սույն որոշման նախագծի ընդունման արդյունքում կապահովվի Երևան քաղաքի Մյասնիկյան պողոտա 2 հասցեում գտնվող անշարժ գույքի (նախկին «Երևանի Ա. Գրիբոյեդովի անվան N 41 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի շենք) հիմնանորոգման-ուժեղացման աշխատանքների դրական փորձաքննությամբ նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման բնականոն ընթացքը, ինչի արդյունքում սահմանված կարգով ՀՀ կառավարություն կներկայացվի ՀՀ պետական բյուջեից գումար հատկացնելու վերաբերյալ առաջարկություն:

#### **Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**«Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի N 1732 - Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի:**

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի N 1732 - Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունումը ՀՀ պետական բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջացնի:

#### **Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**«Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի N 1732 - Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի:**

1. Այլ իրավական ակտերում փոփոխությունների և/կամ լրացումների անհրաժեշտությունը.

Չի առաջացնում:

2. Միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների հետ համապատասխանությունը.

Համապատասխանում է:

3. Այլ տեղեկություններ.

Չկան:

## Ամփոփաթերթ

**«Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի N 1732 - Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ շահագրգիռ նախարարություններից ստացված առարկությունների և առաջարկությունների վերաբերյալ**

Առարկության, առաջարկության հեղինակ, գրության ստացման ամսաթիվ, գրության համար	Առարկության, առաջարկության բովանդակություն	Եզրակացություն	Կատարված փոփոխություններ
1	2	3	4
<p>ՀՀ ֆինանսների նախարարություն 06.03.2018թ. հ.01/8-4/4051-18</p>	<p>Առարկություններ և առաջարկություններ չկան</p>		
<p>ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն 05.03.2018թ. հ.01/22.2/1566-18</p>	<p>Առարկություններ և առաջարկություններ չկան</p>		
<p>ՀՀ արդարադատության նախարարություն 16.03.2018թ. հ. 01/4655-18</p>	<p>«Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի N 1732-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերնագիրն ու նախագծի</p>	<p>Ընդունված է</p>	<p>Լրամշակված է</p>

	<p>տեքստն անհրաժեշտ է խմբագրել՝ հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները, համաձայն որոնց՝ իրավական ակտի լրիվ անվանումը հիշատակելիս դրանում հետևյալ հաջորդականությամբ ներառվում են իրավական ակտն ընդունող մարմնի անվանումը, իրավական ակտի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, ակտի վերնագիրը, ակտի հերթական համարը և տեսակը, իսկ իրավական այլ ակտի կրճատ անվանումը հիշատակելիս դրանում հետևյալ հաջորդականությամբ ներառվում են իրավական ակտն ընդունող մարմնի անվանումը, իրավական ակտի ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը, ակտի հերթական համարը և տեսակը:</p>		
--	--	--	--